ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«15» հոկտեմբերի 2018թ. N 519-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«15» հոկտեմբերի 2018թ.
N 519-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախարարությանը վերապահված գործառույթների սահմաններում հարկային, մաքսային և այլ եկամուտների ընթացիկ, միջնաժամկետ և հեռանկարային քաղաքականության ու վարչարարության մեթոդաբանության մշակումը և իրականացումը, դրա կիրարկման արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև միջազգային հարկային և մաքսային համագործակցության քաղաքականության ուսումնասիրությունը և մշակումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) հարկային և այլ եկամուտների քաղաքականության առաջնայնությունների և գերակայությունների որոշումը, հարկային և այլ եկամուտների քաղաքականության ոլորտին վերաբերող անհրաժեշտ բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների մշակումն ու ներկայացումը.

2) հարկային և այլ եկամուտների քաղաքականության մշակման նպատակով պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցությունը.

3) հարկային և այլ եկամուտների քաղաքականության խնդիրներին վերաբերող հարցերով միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցությունը, այդ համագործակցության գործընթացից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գծով միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը.

5) հարկային և այլ եկամուտների քաղաքականության մշակման նպատակով Նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցությունը, ինչպես նաև նրանց օրենսդրական ոլորտում կատարվող փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

6) հարկային և այլ եկամուտների քաղաքականության ոլորտում այլ երկրներում տեղի ունեցող փոփոխությունների վերլուծությունը, դրանցից բխող առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

7) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործող հարկային քաղաքականության հարցերով փորձագիտական խմբերի հանդիպումներին մասնակցության ապահովումը.

8) եկամուտների քաղաքականության խնդիրներին վերաբերող հարցերով գործարար շրջանակների և նրանց շահերը պաշտպանող մասնագիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, այդ համագործակցության գործընթացից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

9) մաքսային քաղաքականության առաջնայնությունների և գերակայությունների որոշումը, մաքսային ոլորտին վերաբերող բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների մշակումն ու ներկայացումը.

10) մաքսային քաղաքականության մշակման նպատակով պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցությունը.

11) մաքսային քաղաքականության մշակման նպատակով Նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցությունը, ինչպես նաև նրանց՝ Եվրասիական տնտեսական միության և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

12) մաքսային քաղաքականության խնդիրներին վերաբերող հարցերով միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցությունը, այդ համագործակցության գործընթացից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

13) մաքսային քաղաքականության ոլորտում այլ երկրներում տեղի ունեցող փոփոխությունների վերլուծությունը, դրանցից բխող առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

14) Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում մաքսային օրենսդրության կարգավորումների համապատասխանեցումը Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը.

15) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվությունը, նյութերի ուսումնասիրությունը, վերլուծությունը և առաջարկությունների ներկայացումը, միության անդամ երկրների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը.

16) Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային օրենսդրության կիրառության հարցերի քննարկումը, անհրաժեշտ իրավական կարգավորումների մշակումը.

17) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործող մաքսային քաղաքականության հարցերով փորձագիտական խմբերի հանդիպումներին մասնակցության ապահովումը.

18) ԱՊՀ-ի և ԱՀԿ-ի շրջանակներում անդամակցությունից բխող մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտում օրենսդրական փոփոխություններին մասնակցությունը և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակումն ու առաջարկությունների ներկայացումը.

19) մաքսային քաղաքականության խնդիրներին վերաբերող հարցերով գործարար շրջանակների և նրանց շահերը պաշտպանող մասնագիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, այդ համագործակցության գործընթացից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

20) հարկային և մաքսային վարչարարության ոլորտներում առկա իրավիճակի ուսումնասիրությունը, դրա գնահատումը վարչարարության մեթոդաբանության նպատակներին համապատասխանության տեսանկյունից.

21) հարկային և մաքսային վարչարարության ոլորտում առաջնայնությունների և գերակայությունների որոշումը, վարչարարության համակարգի կատարելագործման և զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

22) հարկային և մաքսային վարչարարության մեթոդաբանության մշակման նպատակով պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցությունը.

23) հարկային և մաքսային վարչարարության մեթոդաբանության իրականացման նպատակով Նախարարության հիմնական ր աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցությունը, ինչպես նաև նրանց հարկային և մաքսային վարչարարության մեթոդաբանության գծով օրենսդրական ոլորտում կատարվող փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

24) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործող հարկային և մաքսային վարչարարության հարցերով փորձագիտական խմբերի հանդիպումներին մասնակցության ապահովումը.

25) հարկային և մաքսային վարչարարության մեթոդաբանության խնդիրներին վերաբերող հարցերով գործարար շրջանակների և նրանց շահերը պաշտպանող մասնագիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, այդ համագործակցության գործընթացից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

26) առանձին հարկատեսակների և վճարատեսակների հարկման բազաների վերլուծությունը.

27) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ներուժի վերլուծությունը.

28) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա օրենսդրական փոփոխությունների նախագծերի հնարավոր կամ կատարված օրենսդրական փոփոխությունների փաստացի ազդեցության վերլուծությունը և գնահատումը.

29) ընթացիկ եկամուտների վերլուծության նպատակով համապատասխան տեղեկատվության հավաքագրումը և ընթացիկ եկամուտների վերլուծությունը.

30) եկամուտների վերլուծությանը վերաբերող հարցերով միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցությունը.

31) Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև տնտեսական ինտեգրման վերլուծությունների իրականացումը և դրանց հիման վրա կրկնակի հարկումը բացառելու համաձայնագրերի կնքման առաջնահերթությունների որոշումը.

32) Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրերի մշակումը և նախապատրաստումը.

33) գործող համաձայնագրերում ամրագրված դրույթների վերլուծությունը և հարկային քաղաքականության զարգացմանը համապատասխան դրանց փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

34) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախապատրաստման փուլում դրանցում պարունակվող հարկային և մաքսային դրույթների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

35) հարկային ոլորտին առնչվող այլ միջազգային պայմանագրերի կնքման նախաձեռնողական աշխատանքների իրականացումը և համակարգումը.

36) մաքսային ոլորտում փոխօգնության և համագործակցության մասին Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերի նախագծերի մշակումը, դրանց շուրջ անցկացվող բանակցությունների վարումը, ինչպես նաև համաձայնագրերի ուժի մեջ մտնելու հետ կապված սահմանված ընթացակարգերի կատարման ապահովումը.

37) հարկային և մաքսային հարցերով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, ինչպես նաև դրանց առընթեր հարթակներին և ֆորումներին միանալու նախաձեռնողական աշխատանքների իրականացումը և համակարգումը, այդ համագործակցության գործընթացից բխող առաջարկությունների ներկայացումը.

38) մի շարք միջազգային համաձայնագրերով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր այլ վճարների գծող արտոնությունների տրամադրման և կիրարկման ապահովումը նախատեսող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի նախապատրաստումը.

39) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

40) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Եկամուտների քաղաքականության բաժին.

2) Վարչարարության մեթոդաբանության բաժին.

3) ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժին.

4) Եկամուտների վերլուծության բաժին.

5) Միջազգային հարկային և մաքսային հարաբերությունների բաժին:

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):